ՉՈՐԵՔՇԱԲԹԻ—8 ՀՈԿՏԵՄԲԵՐ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ—ՏԱՐԻ—ԹԻՒ—2740

Դ.—Տ.—20—ՀՈԿՏԵՄԲԵՐ—1880

ԳԱՅՄԱՆ

Տարեկան գին Կ. Պոլսոյ հմր. 10 Մէջ.
» » Գաւառաց » 12 »
Վեցամս. » Կ. Պոլսոյ » 5 »
» » Գաւառաց » 6 »
Օտար երկիրներու » 21/2 Լիրա
Մանուցման տողը մէկ անգամի համար 3 ղրուշ, երկու անգամի համար 2 ղրուշ է. աւելի անգամներու համար զատ տա-կարկութիւն կը լինի։
Մէջն մի թիւ 40 փարա արծաթ։

ԱԶԱՏԱՄԱՐՏ

ԼՐԱԳԻՐ

ՀԱՆԱՊԱԶՕՐԵԱՅ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԳԱՅՄԱՆ

Դուրս գնացած լրագրաց համար ծախքը խմբագրութեան վրայ է։
Լրագրաց վերաբերեալ նամակ կամ օր և իցէ գրութիւն խմբագիր—Տնօրէնի ապտի ուղղուի, Գալատիա Սանտրքճը-լար Ճատտէսի թիւ 193, Նորս խան, Մատիսի դրատնեակը։
Ձանրաց ծախքը չմարուած նամակ չընդունիր։
Ձուրատած նամակ, յօդուած, եւ նա-չեն տրուիր։

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 8 ՀՈԿՏԵՄԲԵՐ

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Լոնտրա 18 հոկտ.

Իսլամական գլխաւոր Մէնապէտ զօրավարն և Օսմանեան զօրքերուն գլխաւոր Մուզիրիս պէյ այսօր արտաքին գործոց նախարար Լորտ Կրանվիլի հետ խորհրդակցեցան։

Փարիզ 18 հոկտ.

Մօտերս, Նարոլէոն իշխանին թագնամի եղող Պոնապարթեան խմբակը զումարուած մ'ընելով, պատուիրակներ անուանած էր իշխանէն բացատրութիւն պահանջելու համար։

Նարոլէոն իշխանը չուզեց ընդունիլ պատուիրակները։

Այս տեսակ հաստատ հեռագիր

Պերլին 19 հոկտ.

Հոհենլոհէ իշխանին առողջութեան վիճակը բարւոքեցաւ։

Լոնտրա 19 հոկտ.

Գարատաղի խնդրոյն վրայ խօսելով, Թայմզ կըսէ թէ Տուլչինեոյի յանձնելովն Եւրոպայ անմիջական պարտքը վերջացած է. յիշեալ լրագիրը կը յարէ թէ այս խնդրոյն մէջ Անդղիա Եւրոպայի հետ համաձայնութեամբ գործած է, բայց առանց այդ համաձայնութեան՝ աւելի յառաջ չպիտի երթայ։

Փարիզ 19 հոկտ.

Պ. Ֆէլիքս Բիա երկու տարի բանտարկութեան դատապարտեցաւ՝ արքայասպանութիւնը փառաւորելուն համար։

Ռոկուզա 19 հոկտ.

Մէյնաւ ծովագնացին մի թիկնապանը Տուլչինեոյի յանձնման վերաբերեալ բանակցութեանց ներկայ կը գտնուի։

Լոնտրա 19 հոկտ.

Անդղ. Բանս.	98 13/16
Օսմ. »	10 1/8
Փոխ. 1865	10 5/4
» 1869	10 5/8
» 1871	67 3/4
» 1872	18 1/2
» 1873	10 3/8
» 1877	80 1/4 (°)
Պանք Օթոման	10 3/8
Ռում. փոխ. 73ի	89 1/8
Կղիպտ. միացեալ	64 7/8 (°)
» արտօնաւոր	92
Տայրա Սանիէ	69 3/4
Փոխ. Ռոշիլտ	95 5/8

Փարիզ 19 հոկտ.

Օսմ. Բանս.	10,15
» Կրկիթուղի	31,75
Պանք Օթոման	512,50
Դայրա Բանս. 5 0/0	120,50
» » 5 0/0 Նոր	85,60

ՆԵՐԲԻՆ ԼՈՒՐԵՐ

ՆՈՐ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆ Ի ՔՐԴԱՍՏԱՆ

Պարսկաստանի արտաքին գործոց նախարարն հետեւեալ հեռագիրն ուղղած է մայրաքաղաքիս Պարսկական դեսպանատան։

«Թէհրան 15 հոկտ.

«Շէյխ Ուպէյտուլլահին Հէքքեարի բնակող երկու որդիքն և Համզա ագա անուն հռչակաւոր աւազակապետը՝ Սամսատուլի և Մարակայի դաւառաց մէջ (ի Պարսկաստան) աւարառութեան և չարագործութեանց սկսան։ Զանոնք զսպելու համար զօրք զրկուեցաւ այն կողմն։ Օտարազգիք՝ այն տեղերը գտնուող Քրդաց վայրենի բնաւորութիւնն ու սովորութիւնները չեն գիտեր։ Ասոնց կողմէ տեղի ունեցած յարձակողական շարժմունք կարեւորութենէ զուրկ են, և իրենց նպատակն աւազակութիւն է միայն։ Պարսկական զօրաց մօտենալուն լուրն իմանալով, Մարակայի մօտերէն ի փախուստ ճամբայ ելան։ Պարսկաստանի մօտերէն ի փախուստ ճամբայ ելան։ Այս իրողութիւնները՝ Բ. Դրան արտաքին գործոց նախարարութեան հաղորդեցէք, և եթէ հարկաւոր դատէք՝ հրատարակութեան յանձնեցէք։ Ես ալ զանոնք թէհրանի նստող օտար դեսպանաց կը ծանուցանեմ։»

———

Վաղքի լրագիրը, վերոյիշեալ հեռագիրն հրատարակելու առթիւ, հետեւեալ տեղեկութիւնները կուտայ Համզա Աղա կոչուած Քուրդ պէյին վրայ։

«Համզա Աղան 45–50 տարեկան մարդ մ'է երկայն հասակաւ. Պէլպասի Աշիրէթին կը վերաբերի, որ Բէվանտուզի և Սամսատուզի միջև վրաններու տակ կը բնակի, և ամառը Պարսկական հողն անցնելով Շնօ և Լահիճանի կողմերը կ'երթայ, իսկ ձմեռն Օսմանեան հողը կը վերադառնայ։ Պէլպասի Աշիրէթին հետ Մամիշի և Մէնքուրի Աշիրէթներն ալ կան, որք ազգական և դաշնակից են։

Այս ցեղերն երբ ամառը Պարսկաստան անցնին, Սամսատուզի կառավարչին քանի մը ձի ընծայ կը դրկեն, և երբ ձմեռն օսմանեան սահմանագլուխը գան, տուրք կը վճարեն, բայց գինաւոր չեն դրուիր։

Նամբդ փաշան Պաղտատի կառավարչ եղած ժամանակ, Համզա Աղան սահմանագլուխն անցած լինելով, Նամբդ փաշան յայնժամ Շէհրի Զօրի կառավարիչ Թաքիէտտին փաշան քանի մը վաշտ զօրքով զրկեց, որք Համզա Աղան պաշարելով ձերբակալեցին։ Թաքիէտտին փաշան Համզա Աղան Պաղտատ զրկեց, ուր ժամանակ մը բանտարկեալ մնաց։

Միտհաթ փաշային Պաղտատի կառավարութեան ժամանակ, Համզա աղերսագիր մը մատուցանելով, ներշնչաւոր առաւ, և խոստացաւ Աշիրէթին քով չերթալ։

Միտհաթ փաշային առաջին անդամ Մեծ-Եպարքոսութեան ժամանակն ալ, յիշեալ Համզա ագան Կ. Պոլիս գալով, Ադ-Սէրայի կողմը առուն մը վարձեց, և ամառնայոյս։

Քանի մը տարի Կ. Պոլիս բնակելէ յետոյ, ամիսն հազար դրուշ ամսականի արժանացաւ, և Պաղտատ բնակելու համար Կ. Պոլսէն ճանրայ ելաւ։ Իրօք ժամանակ մը Պաղտատ բնակեցաւ. բայց յետոյ կերպով մը փախչելով, դարձեալ Պէլպասի Աշիրէթին քով դնաց։

Յայնժամ, այս Համզա Ագան Պէլպասի, Մամիշի և Մէնքուրի Աշիրէթներուն նախագահութիւնն ստանձնելով, Օսմանեան և Պարսկական սահմանագլխոյ վրայ ըստ առաջնոյն վրանարնակ կեանք մը կը վարէր, և իւր հրամանաց ներքև միշտ 4—5 հազար ձիաւոր կը դանուէր։

Այս տարի ամառը Սամսատուլի կողմը գնացած էր, և կ'ըսուի թէ տեղւոյն (Պարսկի) կառավարչէն թշնամանք և անիրաւութիւն տեսած լինելով, այն տեղերու բոլոր Քրդաց հետ միացաւ, և ապըստամբութեան դրօշ պարզեց։ Կը պատմուի նաև թէ Համզա ագան Պարսկական սահմանագլխին վրայ մնացած ինչերը քննելու պաշարեալ Սիւլէյմանիէի մօտը Սիւննէի Պարսկական նահանգին կուսակալ Լպուլ-Ֆէթհ Միրզա խանին, որ Պարսից Շահին հօրեղբայրն էր, ողջունելից նամակ մը գրելով, պահանջեր է որ Սիւննէ քաղաքն յանձնէ, և նոյն կուսակալութեան երկու գաւառակներն ալ գրաւեր է։

Իսկ Շէյխ Ուպէյտուլլահ, վերոյ կուսակալութեան ներքև կաւարի և Շամսինանի բնակիչներէն հաւաքաւոր Քուրդ գլուխ մ'է։ Պարսկական հողին վրայ 5–10 գիւղի տէր է, և իրը թէ Պարսկի պաշտօնատարաց կողմանէ անիրաւութիւն տեսած լինելով, Համզա Աղային հետ միացեր, և Պարսկական հողն արշաւեր է։

Վաղքի այս տեղեկութիւնները բաւական մանրամասն և գոհացուցիչ են, և այդ լրագիրը մինչև ցարդ Քրդամոլութեան հետքաւ հանած չլինելով, հաւանական է որ կատարելապէս հիշ լինին։

Այս տեղեկութիւններէն դոհացուցիչ եղրակացութիւն մը կրնամք հանել. այսինքն՝ թէրճէմանը Հաղիդամին Շէյխ Ուպէյտուլլահի ըսել տուած ին պէս Պարսիկ Քուրդք Օսմանեան հողը մնած չեն, այլ Քուրդ ազգատոմքք Պարսկական հողը մնած են։ Հետեւաբար, եթէ կայսերական կառավարութեան կողմանէ պէտք եղած զինուորական միջոցները ժամանակին ձեռք առնուին, Վասպուրականի Քրիստոնեայ և ուրիշ բնակիչք կրնան ազատ մնալ Քուրդ ազգատոմքաց սովորական չարագործութիւններէն և կեղեքումներէն։ —

Թէրճէմանը Հաղիդամի հանրածանօթ Քրդապաշտան օրագիրը Քրդական նոր ազգատոմքութեան նկատմամբ կատարեալ լռութիւն կը պահէ։

———

Ծերպիայի անդամ և կայսերական ընդհանուր դատախազ Բասթաքի էֆէնտիին երկրորդ կարգի Մէճիտիէ պատուանշան տրուեցաւ։

———

Թուրք լրագիրք կը յայտարարեն այս առաւօտ թէ Օսմ. պատուիրակ Պէարի պէյի և Գարատաղցի պաշտօնատարի մի միջև Տուլչինեոյի յանձնման մասին բանակցութեան ներքև դանուող պայմանագրին ստորագրուելուն լուրը՝ մինչև երեկ իրիկուն Բ. Դուռը չէր եկած։ Բայց միւս տերութեանց պաշտօնատարաց կողմէ մատնուած ջանք կը լինի եղեր, որպէս զի պայմանագրին յապաղութեամբ կնքուի։

———

Վաղքի լրագիրը, Գարատաղցւոց կողմանէ Փոտկորիցայի Իսլամաց եղած ոտիրաւութեանց դէմ բողոքելու համար՝ Վոսմ. Ասիմ փաշային դեսպանաց քով ըրած ձեռնարկին յիշելով, կը ծանուցանէ թէ Գ. Կոշէն հեռագրաւ Գարատաղի իշխանին դիմելով, խնդրեր է որ վերջ տրուի այս յաւալի իրողութեանց, որք միւս կողմէն Տուլչինեոյի յանձնումն ալ կը դըժուարացնեն. և Գարատաղի իշխանն երեկ հեռագրաւ պատասխաներ է թէ Գարատաղի մէջ ընդհանուր ներում հրատարակուած է, և երբ Տուլչինեոյ յանձնուի, բանտարկեալց ներում պիտի շնորհուի։

———

Սամսոնի խնդիրը քննելու պաշտօնեայ մը Սամսոնի Գերմանական Ինտերնասիոնալ լրագրի Բ. Դրան դէմ թշնամական լեզու գործածելուն պատճառաւ թուրքիա մնալէ արգիլուեցաւ։

———

Անգլիա և այլ Գերմանացի պաշտօնատարաց Օսմ. ծառայութեան մտնելուն վրայ լրագրաց հրատարակած տեղեկութիւնք, կըսէ Գերմանական լրագիր մը, սխալներ կը պարունակեն։ Պատճառն այս է թէ, Պ. Վէթէնտորֆէն զատ, որ երբեմնական նախարարութեան խորհրդականի պաշտօն պիտի վարէ, երկու ուրիշ Գերմանացի պաշտօնատարաց ալ խօսք կայ, այն է որ տարբերն դրծոց նախարարութեան փաստաբան խորհրդականի պաշտօն վարելու յարմար օրէնսդէտ մը, և անուղղակի արաց վարչութեան հրմատ պաշտօնատարի մը։

Այն պաշտօնատարաց հետ Գերմանական կառավարութեան միջնորդութեամբ Բ. Դրան բացած բանակցութիւնները դեռ չեն լրացած։ Նոյն իսկ Պ. Վէթէնտորֆի ալ դեռ պաշտօնապէս եղծուիչ նախարարութեան խորհրդական չէ անուանած, թէ և այդ պաշտօնն արդէն կատարել սկսած է։

———

Կը լսեմք թէ Դասբմ-փաշայի, Ֆէնէրի, Պալատի, Խասգիւղի և Էյիպի թաղերուն մէջ հանրագրութիւնք կ'սատարագրուին, խնդրելու համար կայսերական կառավարութենէն, որպէս զի Ռոկեղլիւրի շոգենաւերով երթևեկող ժողովրդոց կեանքն ապահովելու միջոցներ ձեռք առնուին, և անցեալ շաբթուան արկածին զոհ եղողներուն ընտանեաց հատուցում տրուի։

———

Այս աւուր Վաղքիի մէջ կը կարդամք.

«Կը լսեմք թէ Պոմոնտի շրջակայից Հայ բնակիչներէն 400ի չափ ընտանիք (տուն), Օսմ. հողը գաղթելու արտօնութիւն ստանալու համար պատուիրակներ դրկած են կայսերական կառավարութեան, և մինչև իսկ անոնցմէ մի մասը Ֆաթիհի գաղթականաց մատնամէջին գիմած են։»

———

Մեր այս աւուր թուով Երզընկայէն եկած կարեւոր թղթակցութիւններ կը հրատարակեմք։ Մասնաւոր նամակի մի մէջ ալ, զոր Երզընկա բնակող պատուարժան բանեւոր նամակի մի մէջ ալ, զոր Երզընկա բնակող պատուարժան բանեւոր նամակի մի մէջ ալ, 27 սեպտ. թուականաւ, հետեւեալ տեղեկութիւնները կը տեսնեմք, որք ուշադրութեան արժանի են.

«Երզնկան 7 Նահիջի վերածեցաւ, որոց ամենուն ալ խլամ Միւսիւլներ տրուեցան, երկրորդ Միւսիւլներն Հայ են. գիւղական խորհրդոց անդամներուն կէսն ալ Հայ է։

«Այս կողմը բերքերն առատ են այս տարի։

«Բարբերդէն եկած տեղեկութիւններէ կ'իմանամ թէ տեղւոյն ազգային գործերն յոյժ թշուառ վիճակի մէջ են՝ Առաջնորդի չգոյութեան պատճառաւ։

«Կարնոյ կուսակալը Խուրշիտ փաշան ուղեցաւ Ակմէտ Բասիմ փաշան՝ նախընթաց օրն յիշեալ կղզին գնաց միւնոյն կայսերական շոգենաւով, որ Պարսկաստանի Շահին հօրեղբայրն էր։

———

Բուսնական Ինտերնասիոնալ լրագիրը Բ. Դրան դէմ թշնամական լեզու գործածելուն պատճառաւ թուրքիա մնալէ արգիլուեցաւ։

———

Այլ և այլ Գերմանացի պաշտօնատարաց Օսմ. ծառայութեան մտնելուն վրայ լրագրաց հրատարակած տեղեկութիւնք, կըսէ Գերմանական լրագիր մը, սխալներ կը պարունակեն։ Պատճառն այս է թէ, Պ. Վէթէնտորֆէն զատ, որ երբեմնական նախարարութեան խորհրդականի պաշտօն պիտի վարէ, երկու ուրիշ Գերմանացի պաշտօնատարաց ալ խօսք կայ, այն է որ տարբերն դրծոց նախարարութեան փաստաբան խորհրդականի պաշտօն վարելու յարմար օրէնսդէտ մի, և անուղղակի արաց վարչութեան հրմատ պաշտօնատարի մի։

Այն պաշտօնատարաց հետ Գերմանական կառավարութեան միջնորդութեամբ Բ. Դրան բացած բանակցութիւնները դեռ չեն լրացած։ Նոյն իսկ Պ. Վէթէնտորֆի ալ դեռ պաշտօնապէս եղծուիչ նախարարութեան խորհրդական չէ անուանած, թէ և այդ պաշտօնն արդէն կատարել սկսած է։

———

Կը լսեմք թէ Դասբմ-փաշայի, Ֆէնէրի, Պալատի, Խասգիւղի և Էյիպի թաղերուն մէջ հանրագրութիւնք կ'սատարագրուին, խնդրելու համար կայսերական կառավարութենէն, որպէս զի Ռոկեղլիւրի շոգենաւերով երթևեկող ժողովրդոց կեանքն ապահովելու միջոցներ ձեռք առնուին, և անցեալ շաբթուան արկածին զոհ եղողներուն ընտանեաց հատուցում տրուի։

———

Այս աւուր Վաղքիի մէջ կը կարդամք.

«Կը լսեմք թէ Պոմոնտի շրջակայից Հայ բնակիչներէն 400ի չափ ընտանիք (տուն), Օսմ. հողը գաղթելու արտօնութիւն ստանալու համար պատուիրակներ դրկած են կայսերական կառավարութեան, և մինչև իսկ անոնցմէ մի մասը Ֆաթիհի գաղթականաց մատնամէջին գիմած են։»

———

Մեր այս աւուր թուով Երզընկայէն եկած կարեւոր թղթակցութիւններ կը հրատարակեմք։ Մասնաւոր նամակի մի մէջ ալ, զոր Երզընկա բնակող պատուարժան բանեւոր նամակի մի մէջ ալ, 27 սեպտ. թուականաւ, հետեւեալ տեղեկութիւնները կը տեսնեմք, որք ուշադրութեան արժանի են.

«Երզնկան 7 Նահիջի վերածեցաւ, որոց ամենուն ալ խլամ Միւսիւլներ տրուեցան, երկրորդ Միւսիւլներն Հայ են. գիւղական խորհրդոց անդամներուն կէսն ալ Հայ է։

«Այս կողմը բերքերն առատ են այս տարի։

«Բարբերդէն եկած տեղեկութիւններէ կ'իմանամ թէ տեղւոյն ազգային գործերն յոյժ թշուառ վիճակի մէջ են՝ Առաջնորդի չգոյութեան պատճառաւ։

«Կարնոյ կուսակալը Խուրշիտ

ԲԱՂԱՔԱԿԱՆ

Մեր աչքին առջև ունինք Հայ-Թուրքիոյ վերնագրով տետրակ մը Ֆրանսերէն լեզուաւ Փարիզ տպագրուած, որ Հայոց խնդրոյն վրայ խորհրդածութիւններ կը պարունակէ։ Տետրակին հեղինակը բուն խնդրոյն մտնելէ առաջ Հայոց վրայ պատմական տեղեկութիւններ կուտայ և կ'ըսէ թէ Հայք, որոց տառապանաց վրայ Եւրոպա դիտելով իրենց վիշտերը մեղմել կ'ուզէ, վեհ. Սուլթանին հովանաւորութեան ներքև մնալ կը բաղձան միշտ և դոհ կը լինին իրենց անձնական ապահովութեան համար քանի մ'ներքաշիւորութիւններով։ Հայք որք այժմ թշուառ և հարատահարեալ են և կարեկցութեան արժանի, փառաւոր անցեալ մ'ունին զոր Անդ վիպացի պատմագէտ մը "աղնիւ և մեծ" անուանած է։

Տետրակին հեղինակին Հայաստանի համառօտ աշխարհագրութիւնը կ'ընէ յիշելով Մեծ և Փոքր Հայք, որոց կարևորագոյն մասն այժմ Թուրքիոյ ձեռք է։ Ինչպէս յայտնի է, Ռուբինեանց հարստութիւնը վերջացած էր 1375ին։ Շատ ազգեր՝ Մեդացիք, Ասորիք, Մակեդոնացիք, Պարսիկք, Յոյնք և Արաբք Հայաստանի տիրապետութեանը վրայ կռուած էին, անոնց-մէջ՝ վերջը Թուրքերը տիրեցին Փոքր Ասիոյ վրայ, ԺԵ. դարուն մէջ Թաթարաց արշաւանքը տեղի ունեցաւ և յետ սոցա Թիւրքմէնաց։ Պարսիկներն և Թուրքերը սատակիչ կռիւներ ըրին և Հին Հայաստան այս երկու տերութեանց միջև բաժնուած էր երբ երրորդ տերութիւն մը՝ Ռուսիա՝ երկրակալութիւններ ընելով Հայաստանի մի մեծ մասը ձեռք անցուց։

Հեղինակը կը յիշէ Հայոց ազգին միջին դարու մէջ օտարաց հետ ունեցած յարաբերութիւններն և քաղաքակրթութեան համար նոցա ըրած ծառայութիւններն։ Հայք իմաստուն օրէնքներ ունէին, կ'ըսէ, որոց հետքը կը տեսնուի Խորենացւոյն պատմութեան և 1184ին դրուած Մխիթար Գօշի դատաստանագրքին մէջ։ Մեծանուն Հայագէտ Պ. Վիքթոր Լանկլուա կը վկայէ թէ հին Հայ մատենագիրք զրականութեան գրեթէ ամեն տեսակը փորձած են։ Արդի գրականութիւնն 30 տարիէ հետէ մեծապէս յառաջդիմած է և շատ մ'Եւրոպացիներ գուցէ պիտի զարմանան լսելով թէ Գաղղիացի նշանաւոր մատենագիրք Հայերէնի թարգմանուած են։ Գիտութեան և քաղաքակրթութեան համեստ գործաւորներն եղող Հայ գրիչներ կ'աշխատին միշտ լուսաւորելու։

Տետրակին հեղինակը, 'ի չգոյէ պաշտօնական վիճակագրութեանց, 1867ի փարիզի արուեստահանդէսին մէջ Օսմանեան գործակատար Սէլահէտտին պէյի յայնժամ հրատարակած գրքէն քաղելով, Թուրքիոյ Հայոց թիւը 2 միլիոն 400 հազար կը հաշուէ, որոց 400 հազարը Եւրոպական Թուրքիոյ և 2 միլիոնը Ասիական Թուրքիոյ մէջ։ Ասոնցմէ զատ կան 800 հազար Հայք 'ի Ռուսիա, 250000 'ի Պարսկաստան, 25000 Աբիսինիա, 20000 Ամերիկէ և 'ի Հնդիկս և 5000 ցրուեալ ուրիշ երկիրներու մէջ, որոց գումարն է՝ 3,500,000, 2/3ը Թուրքիոյ մէջ լինելով։ Այս հաշուոց ճշդութեան վրայ կասկածիլ ներելի է։ Ասկէ զատ, այն Հայերն որք իրենց պաղթականութեամբ հայրենի հողը թողած են, դրեթէ քաղաքական կարեւորութիւն մը չունին այս վերջնոյն համար։ Հեղինակը Հայոց վիճակը նկարագրելու և Անդրիայի հիւպատոսաց վիճակագրերը, ինչպէս նաև Ալֆէին փաշայի Տիարպէքիր գրաւած ժամանակ աքսորած քանի մը Բուրդ գլուխներուն վերագրածը յիշելով, կը յայտնէ թէ պաշտօնատարք անկարող կը դտնուին Հայոց պաշտպանութեան մասին։ Ի վերջոյ, Պերլինի վեհաժողովին ներկայացեալ յիշատակագրի մը մի երկար հատուածը կը դնէ, որոյ եզրակացութիւնն է Լիբանանու կանոնագրին նման վարչութիւն մը հաստատել Հայաբնակ դաւառաց մէջ։ Տետրակին հեղինակը խիստ ջերմ կերպով կը պաշտպանէ այս առաջարկութիւնը, զի առանց Բ. Դրան վեհապետական իրաւանց դպչելու Հայոց անդորրութիւնը կ'ապահովէ և Փոքր-Ասիոյ մէջ Ռուսիոյ աշխարհակալութեան առաջքը կ'առնու։ Հեղինակին այս վերջի փասաը բացատրութեան կարօտ է, քանզի եթէ Եւրոպա չուզէ Ռուսիոյ երկրակալութեան ոտհման դնել և Թուրքիա ոչ եւս կարենայ վանել զՌուսիա, չեմք հասկնար թէ Հայք ինչպէս պիտի դիմադրեն։ Կարելի է հեղինակը աճապարանօք գրած լինելով՝ այս կէտիս վրայ իւր միտքը լաւ ներկայած չէ, զոր եթէ մեկնել պէտք լինի, կրնայ ըսուիլ թէ Հայք բարենորոգուելով՝ բարենորոգեալ Թուրքիոյ օգտակար օժանդակ կրնան հանդիսանալ, ինչպէս նաև Եւրոպական այնտերութեանց, որք հաճին զաշնակցիլ բարենորոգեալ և վերակազմեալ Թուրքիոյ մը հետ։ Հեղինակը թերեւս ըսել ուզած լինի նաև թէ Հայաստան բարենորոգուելով, կրնայ օր մը Ռուսիոյ ձեռք նոր պատրուակ մը չլիներ։

Հեղինակը Լիբանանու դէպքերը ցուցնելու համար անոր կազմական կանոնագրոյն, և 9 յունուարի 1861 թուականաւ տէրութեանց միջև կնքեալ դաշնագրին պատճէնները կը դնէ իւր գործին վերջը։ Բայց ըստ մեզ՝ սակէ աւելի կատարեալ կանոնագիր մը կայ, որ է միջազգային խառն յանձնախմբի մը միջոցաւ Եւրոպական Թուրքիոյ համար անցեալները պատրաստուած և այս անգամ խորհրդարանին հաղորդուած ծրագիրն, որ ըստ հոկտեմբերի 31 Օմ. ծանուցագրին, քանի մը բարեփոխութեամբ գործադրելի պիտի լինի կայսերական կառավարութենէն։

ՖՐԱՆՍԱՀԱՅ

ԲԱՌԱԳԻՐՔ Ն. ԲԻԻԶԱՆԴԱՅԻՆՈՑ

Գոհ եմք որ այսօր ևս կարող կը լինիմք բաւական որոշ տեղեկութիւններ տալ այն բազմաթիւ Հայ բանասիրաց և ուրիշ ազնուամիտ անձանց, որք Նորայր Բիւզանդացւոյ հոկայական ձեռնարկին վրայ լսելի կ'ուզեն անհամբեր։ «Գոհ եմք» կ'ըսեմք, զի կարող կը լինիմք ինչ ինչ նոր տեղեկութիւններ տալ այս մասին։ Բայց իրօք ցաւալի է որ մեր տալու տեղեկութիւնք «գոհացուցիչ» չեն։ Թերթերը կանոնաւորապէս կը հրատարակին ամեն շաբաթ օր։ և 20ԴԸ մի շաբաթ առաջ հրատարակուած էր։ Արդէն ծանուցած եմք թէ, գործին կարեւորութեան հակառակ, 2,250 օրինակ միայն կը տպուի։ Արդ, թէ և տան երեք ամիսէ ի վեր բաժանորդագրութիւն բացուած է, և թէպէտ ազգային Մամուլն իւր պարտքը կատարած է ամենաընդարձակ հրատարակութիւն տալով Հայազգի մեծանուն Դրագէտին ձեռնարկութեան, տխրութեամբ կը տեսնեմք թէ այդ 2,250 թերթերէն առ այժմ 370 թիւ անդամ կանոնաւոր սպառում չունենար։ Իրաւ է որ չէր կրնար սպասուիլ թէ դիրքն ամբողջապէս չհրատարակուած բոլոր թիւերը կանխաւ սպառուէին, և Հեղինակն ալ չէր կրնար պահանջել զայս։ Բայց գո՞նէ տպագրական դժուարութիւն չմնալու համար բաժանորդագրութիւն անհրաժեշտ էր, և ա՛յդ է որ կը պակսի այժմ։ Գաղղիերէն–Հայերէն ընդարձակ Բառարանն այժմ 101 օրինակի բաժանորդ ունի, և ձեռքէ ալ 268 թիւ կը վաճառի, (որ է առաջին թերթին վաճառման թիւը,)։ Բանի մ'ամիս առաջ ծանուցած էր սակայն թէ, լոկ տպագրական դժուարութեան վերջ տալու համար, գո՞նէ 500 օրինակ ձեռքէ վաճառուելու է։ Մինչև յարդ այսպէս չէ եղած։ և, որ աւելի զարմանալի է, մինչև յարդ հրատարակեալ 20 թերթերու իւրաքանչիւրէն դեռ 268 ական հատ իսկ չէ վաճառուած։ Կարելի է որ ձեռքէ առնողք քանի մը շաբաթին անդամ մը դնել ուզեն, կամ դադրեցուցած լինին դնումն։ Իրողութիւնն այս է սակայն որ ձեռքէ դնող 268 բաժանորդի բաժնին մնացած 3,360 թիւէն մինչև յարդ 3,530 թիւ միայն վաճառուած է։

Վարը կը հրատարակեմք բաժանորդաց երկրորդ ցուցակն, և բաժանորդագրութեան բուռնդակութիւնը։ Մեր ընթերցողաց ալ ներողամտութեան վստահելով, կ'ընդօրինակեմք 3—4 առաջ ամիս Մասիսի մէջ ասոյն նիւթին վրայ հրատարակեալ յօդուած մը, («ՎԱՐՁՔ ՀԱՅ ԳՐԱԳԻՏԱՅ»), յորում բացատրուած իրողութիւնք այժմ ևս կատարելապէս ճշմարիտ են, դժբաղդաբար։ Այդ յօդուածին մէջ տեսնուող թիւերը բաղդատելով ներկայ թիւերուն հետ, խղճամիտ ընթերցողք անշուշտ ցաւով պիտի նկատեն թէ Պ. Նորայր Բիւզանդացւոյ գործն, հակառակ իւր մեծամեծ արժանեաց, ո՛րքան յամր կ'ընթանայ, —ժողովրդական ընդունելութեան և քաջալերութեան մասին։ Եւ երբ, պատասխան հեղինակին կոչմանէ ջանք և զոհողութիւն բնաւ չեն խնայուիր։ և տան ու չորս տարուան հեղինակութեան տաժանելի աշխատութեանց վրայ, աւելցած է այժմ տպագրութեան հոգն, յորում, դիւրաւ կրնայ հասկցուիլ թէ, ամեն ինչ հեղինակէն կախում չունի, այլ հատարակութենէն։ Ծիծաղելի կը թուի մեզ նոցա երկիւղն որք կը վախնան թէ գործը կէս ճանբան կը մնայ, և իրենց դրամն ի զուր վատնուած կը լինի։ Բաժանորդաց դրամը պահուած կը կենայ, և մինչև որ գործին տպագային չապահովի, անոր չդպչիլ որոշուած է։ Այդ երկիւղը պատրուակ մը միայն լինել կը թուի։ Բաժանորդ պէտք է գրուիլ, կամ գո՞նէ կանոնաւորապէս ձեռքէ դընել, որպէս զի տպագրութիւնն ապահովի, և օր մը լրանայ, և ոչ թէ սպասել որ լրանայ, և անկէ ետքը դնել։ զի Հեղինակն անշուշտ յանցաւոր չէ եթէ այդպիսի ձեռնարկ մը ինքնին դլուխ հանելու չափ դրամագլուխ չունենայ պատրաստ։ և եթէ ամեն մարդ որոշէ յետոյ ամբողջ գործը գնել, Տպագրիչն ալ արդեօք կ'ընդունի՞ իւր հաշուն յետոյ կարգադրել, այսինքն՝ Բառարանը կազմող 160ի չափ թերթերուն տպագրելէն ետքը։

Մեք յատկապէս կը պնդեմք այս նիւթին վրայ, զի անոր տակը մեծ սկզբունք մը կայ։ այն է, ինչպէս ջանացած եմք ցուցնել վարը տեսնուելիք յօդուածին մէջ, Պ. Նորայր Բիւզանդացւոյ ձեռնարկը՝ Հայ Գրականութեան տաճիճանին և Հայ դրագիտաց վիճակին հետ սերտ կապակցութիւն ունեցող ձեռնարկ մ'է։ կը փափաքինք որ Հայերէն–Գաղղիերէն ընդարձակ Բառարանին հրատարակութիւնը նշան մը լինէր այդ Գրականութեան բարգաւաճման և այդ դրագիտաց կացութեան բարւոքմանը։ Մինչև յարդ այս օրինաւոր վախքը չը լրացաւ։ բայց պէտ է որ լրանայ, եթէ Ազգային Յառաջդիմութիւն ըսելով սին բառ մ'և եթ չեմք հասկընար այժմ իսկ։ ԲԻԻԶԱՆԴ

ԵՐԿՐՈՐԴ ՑԱՆԿ ՍՏՈՐԱԳՐՈՂԱՑ

ԳԱՂԼԻԵՐԷՆ–ՀԱՅԵՐԷՆ ԲԱՌԱՐԱՆԻՆ

Ներայ Ն. Բիւզանդացւոյ

(Տես Առաջին ցանկը լրագրոյս 1880 յունվար 2 (Հ. Տ) թուոյն մէջ։)

	Օրինակք
Արհիպատիւ Տ. Սուքիաս Գոզանճեան Արքեպիսկոպոս Մեծապատիւ Տեարք։	1
Աղարեան Պետրոս	1
Աղահվերտեան Մանուկ	2
Աղահվերտեան Մկրտիչ	1
Աղջիկեան Յովսէփ	1
Այվազեան Անդրանիկ	1
Անանուն անն	1
Անանուն անն	1
Արծրունի Յոհաննէս	1
Եսայեան Տիգրան	1
Եսայեան Յոհաննէս	1
Զօրեան Մանուկ	1
Էլիկիւզլեան Գաբրիել	1
Էսատեան Մկրտիչ (երկրորդ անդամ)	3
Թէրլէմէզեան Մկրտիչ (Վան)	1
Թիրատեան Սեդրակ	1
Խորասանճեան Տօքթ. Միքայել	1
Կիւլպէկեան Սարգիս–Սերոբէ	1
Հալաճեան Բարսեղ	1
Մալխասեան Գրիգոր (Օրթաքէյ)	1
Մանուկեան Ս. Մկրտիչ	1
Մըսըրլեան Եղիսաբեդ	1
Միացեալ Ընկերութիւնք Հայոց (երկրորդ անդամ)	2
Մոմճեան Միքայել	1
Յովակիմեան Գառնիկ	1
Յովհաննէսեան Արզար, (Խմբագիր–Տնօրէն Փորձ անտագրին Տփխիսի)	1
Նաֆիլեան Տօքթ. Անտոն	1
Նորատունկեան Յարութիւն	1
Շահզադեան Եղիա	1
Շամանճեան Գրիգոր	1
Պաղատար Խաչատուր (Կեսարիա)	1
Պարոյր Բիւզանդ, (Օգնական–Խմբագիր Մասիսի)	1
Սամանճեան Ա. Գէորգ	1
Փափազեան Յակոբ (Լոնտրա)	1
Փէչանմաճեան Սահակ	1
Փորթուգալեան Մկրտիչ (Վան)	1
Ֆրանկիւլեան Խաչատուր	1
Ճ. Ս. Ռիմոա (Անդրկովկասի)	1
Ժորժ Բէսանի	1
	43

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ։ —Երեսուն և եօթն նոր բաժանորդք երեսուն և ութ օրինակաց համար վճարած են Օսմ. լիրա յիսուն և հինգ ու կէս, որոնց վրայ աւելցնելով երկու նախկին բաժանորդաց վերստին հինգ օրինակաց համար ստորագրելը, կ'ընէ ընդ ամենը քառասուն և երեք օրինակ, Օսմ. լիրա վաթսուն և երեք։ Նախընթաց ցանկին գումարն էր յիսուն և ութ օրինակ, Օսմ. լիրա ութսուն և եօթն։ արդ առաջին և երկրորդ ցանկերուն միահամուռ գումարն կ'ընէ 82 բաժանորդք, 101 օրինակք, 150 օսմ. լիրա։

Գանձապետք
Դ. Ա. Սամանճի—Մոմճեան
Հեղինակն
Ներայ Ն. Բիւզանդացի

ՎԱՐՁՔ

ՀԱՅ ԳՐԱԳԻՏԱՅ

Ամեն երկրի մէջ գրագէտներն արհեստաւորաց այն դասը կը կազմեն, որոյ գլխաւոր պաշտօնը մտաց և սրտի պտուղքն հայթայթել է։ Եթէ կան արհեստաւորներ, այդ արտադրութիւնք մի միայն մեր մարմնոյն պիտոյից կը համապատասխանեն, անհրաժեշտ պէտք կար ուրիշ արհեստաւորաց, որք մեր անհրաժեշտ պէտքերն հոգային, պէտքեր, որք անշուշտ գո՞նէ այնչափ բազմաձեւակ և այնչափ մեծ են, որչափ մեր մարմնաւոր պէտքերը։ Գրագէտներն, որք արհեստաւորաց այս երկրորդ տեսակը կը ներկայացնեն, ամեն երկրի մէջ իրարմէ բոլորովին տարբեր վիճակ ունին։ ամեն երկրի և ամեն ազգի մէջ մարդու պիտոյքը մի և նոյն կերպիւ չեն ընթանար, և եթէ այսպէս է նոյն իսկ նիւթական պիտոյից համար։ Այս պատճառաւ է որ ամեն ազգի մէջ գրագիտաց՝ այդ բարոյական արհեստաւորաց՝ թիւն և նիւթական վիճակն այն ազգին յառաջդիմութեան աստիճանէն կախում ունի, այնպէս զի ուր որ ժողովուրդն աւելի յառաջադէմ է, այն է՝ ուր որ ժողովրդեան մտաւոր և բարոյական պէտքերն ամենէն աւելի զգացուած են, անդ գրագիտաց խումբն աւելի բազմաթիւ կը լինի և աւելի լաւ կը վարձատրի։ ուրիշ բառերով, ամեն երկրի մէջ, գրագիտութիւնն յառաջդիմութեան չերմաչափն է։

Եթէ այդ չերմաչափին վրայ չափեմք մեր ազգային յառաջդիմութեան աստիճանն, ո՞չ ապաքէն նոր ապացոյց մը կ'ունենամք մեր յետադիմութեան։ Մեր ազգին մէջ այ երեւան եկած էին գրագէտներ, որք իրրեւ մատենագիր, իրրեւ բառնատեղծ, իրրեւ խմբագիր կամ իրրեւ դատաւոր, ազգային կարեւոր պիտոյից համապատասխանող օգտակար ծառայութիւններ մատուցին, և տակաւին կը խոստանային մատուցանել։ ամեն մարդ դիտակայն թէ վհատութիւնն ի վերջոյ մինչեւ սի՛ր աստիճան տպաւորութիւն ըրած էր անոնց վրայ։ Այն օրերն իսկ, ուր յառաջդիմութիւն և ազգ ասիրութիւն բառերն ամենէն աւելի կը յեղյեղուէին մեր բերանները մէջ, քանի՛ քանի՛ բարձր օղիներ, որք թերեւս ազգային այս ընդհանուր խաւարին մէջ մէկ մէկ ջահ լինէին, ամեն զրաղումթոզած, ամեն աշխատութենէ յուսահատած, պարտաւորուած էին, յակամայս անշուշտ, մտածել թէ աւելի խոհեմութեամբ գործած չէի՞ն լիներ եթէ տարբեր ընթացքի մէջ մտնէին իրենց օրապահիկ հացն։

Բայց անցեալն արհամարհանօքյիշելու համար գո՞նէ ներկային մէջ տարբեր դրութիւն մը տեսնելու համար։ Դժբաղդաբար, այսօր իսկ, նոքա որք ժողովրդեան բարոյական և մտաւոր վիճակին բարւոքմանն կ'աշխատին, ինչպէս նաև նոքա որք ազգին մէջ դրական դաղափարներ տարածելով նորա նիւթական յառաջդիմութեան իսկ մեծապէս կը նպաստեն, բոլոր այս կարգի անձինք, այսօր իսկ, իրենց աշխատութեանց և զոհողութեանց փոխարէն, ժողովրդեան ամենէն նուազ վարձատրեալ մասը կը կազմեն բազդատաբար։ կը դժկամակէինք չափազանց դրապէս խօսիլ այս փափուկ խնդրոյն վրայ, եթէ, դժբաղդաբար, չափազանց դրապէս չը գիտնայինք թէ, ա՛յսօր իսկ, Հայ դրագիտաց վիճակն ըսելով, ոսկեզօծեալ թշուառութիւն մը միայն կը հասկնամք, թշուառութիւն մը, զոր անշուշտ կ'ազնուացնէ ազգային անհատից էջՔէջ կոչուած մասն, և որ սակայն, ինչ գոյնի և ձեւի տակ ալ ներկայանայ, և ենթակայն ա՛վ ալ լինի, Բշ—ռ—ռ—Ռ—ն է, և թշուառութիւն միայն, բառին տառական և ամենատարրական իմաստով։

Եւ այս ալ ճիշդ յայնժամ այսպէս կը լինի, երբ Հայ դրագիտաց քաջալերումն ոչ անկարելի է և ա՛չ ալ խիստ դժուար։ Մեք բարենորոգումներ կը խնդրեմք, որք ո՛չ անկարելի են և ոչ յոյժ դժուար, և երբ կը տեսնեմք թէ նոցա գործադրութիւնը կը յապաղի, իրաւամբ կը դանդաղիմք։ Բայց, ինչպէս ուրիշ առիթներով ևս ըսած եմք, ո՛չ ապաքէն նոյն դիտողութիւնը մեր ներքին վիճակին նկատմամբ ալ կը ընդունիմք ընել։ Չի՞մք կրնար ըսել, հաւատար իրաւամբ, թէ մեք ներքին պէտքեր ունիմք, թերեւս նոյնքան ստիպողական, զորս թէպէտ առանց մեծ նեղութեան կրնամք գոհացընել, բայց չեմք ըներ։ զի մեր ազգին անհոգութիւնն առած դարձած է, երբ հարկ լինի մեր անձնական շահէն քիչ մը տարբեր շահուց վրայ խորհիլ։

Ճիշդ այդպէս է Հայ դրագիտաց վիճակին նկատմամբ ալ։ Ազգին այս բարոյական գործաւորաց ո՛չ թիւն յոյժ մեծ է, ո՛չ ալ արտադրութիւններն յոյժ բազմաթիւ, որպէս զի անոնց ամեն մին քաջալերելու գործը դժուարանայ, իրրեւ ոչ—համապատասխան մեր ազգին մտաւորական աստիճանին։ Ընդհակառակն, շատ մարդ դիրք կը կարդայ, այսինքն՝ իւր մտաւորական վիճակը բաւական զարգացեալ է դիրք կարդալու համար, բայց գոհ կը լինի ուրիշի դիրքը փոխ առնելով։ շատ մարդ լրագիր կը կարդայ, թէև փարա մը չվճարեր լրագրատաց, և ուրիշներ, որք ոչ դրքի և ոչ լրագրի տակ կը դանեն, բաւական դրամ ունին սակայն ամեն տեսակ զեղխութեանց կամ գո՞նէ անօգուտ ծախուց յատկացնելու համար։ Յորմէ կ'եզրակացնեմք թէ, երբոր ուզուի, մեր դրագիտաց փոքր խմբին քաջալերումն կարծուածին չափ դժուարին բան մը չէ, — մինչդեռ, միւս կողմէն, աղոր օգուտները բաւական մեծ են՝ ատա նոցա վրայ

ծանրանալու հոգէն դժուղ աղատելու համար, — և թէ Հայ անհատից այս օգտակար և առհմանաւոր մասն եթէ այժմ չքաջալերուիր, կամ աւելի ճիշդ խօսելով, եթէ չվարձատրուիր, այս ո՛չ միայն մեր ժողովուրդին ազիտութեան, այլ և անհոգութեան արդիւնքն է։

Գրավաճառաց քով տեսնելով մի գիրք, որ շատ և շատ ծախուելու արժանի էր, և որ սակայն հաղիւ մի քանի դնող ունեցած է. անդին տեսնելով Հայ գրագէտ մը, որ մեծ ապագայ ունէր և կրնար ազգին մեծապէս օգտակար լինել, բայց ամեն ջանքէ վհատած, կամ կ'ատելիէ և կամ բոլորովին կը լքանէ այն ասպարէզն որուն կոչում ունէր. քիչ մ'անդին, շուկայի մը մէջ, տեսնելով "Թափառական Հրեայէն տեղի պըտոյտ կ'ընէ, — ձեռքէ ձեռք. և յիշելով, միւս կողմէն, թէ այն մեծ չարիքն, որ իրաց այս տխուր վիճակէն կը ծագի, մեծ ջանքի կամ մեծ զոհողութեան կարօտ չէր և չէ դարմանուելու համար, — ասոնք մեր մտաց առջեւ բերելով, չեմք կրնար ամեն օր այսպիսի տխուր խորհրդածութիւններ չընել։

Բայց մասնաւոր պարագայ մը յանկարծ մեր ուշադրութիւնը գրաւած էր, և այդ պարագայն է որ այսօր իսկ ներկայ խնդրոյն վրայ խօսիլ կուտայ մեզ։ Այս պարագայն է՝ ազգային տաղանդաւոր գրագէտ մը, այն է՝ Մեծ. Նորայր Բիւզանդացւոյ հեղինակութեամբ հրատարակուող Դաղղիերէն—Հայերէն Մեծ Բառարանին հրատարակութեան գործին մէջ ծագած դժուարութիւնը։ Պատուարժան հեղինակը տասն և չորս տարի աշխատած էր ազգին մի կարի մեծ պէտքը լրացնելու համար, և այդ երկար տարիներու երկանց արդիւնքն եղող աշխատութիւնն՝ Եւրոպական ամենամեծ գրաշիտաց համբաւը չինելու չափ կարեւոր և լաւ աշխատութիւն մ'էր։ Ինք Բառարան մը կը մատուցանէր ազգին, յոյսով, որչափ որ կարելի է դատել արդէն հրատարակեալ էջերէն, Դաղղիերէն բառերուն իրենց ամեն երանդներով և ամեն առումներով բացատրութիւնն և ասոնց դէմ Հայերէն հին և նոր բառից ընտրութիւնն իրենց ամենաարժէր կէտին կրցած էին հասնիլ, այնպէս որ, նոր Բառարանն ոչ միայն իւր նախորդաց վրայ անհամեմատ առաւելութիւններ ունէր ամեն տեսակէտով, այլ նաև՝ անոր հեղինակին Հայերէն և Դաղղիերէն լեզուաց և ընդհանուր լեզուագիտութեան վրայ ունեցած բոլորովին բացառիկ հմտութիւնէն դատելով, հաւանականաբար մեր ժամանակներս ուրիշ նմանօրինակ գործը այդ աստիճան կատարելութեան չպիտի կրնային հասնիլ։ Վերջապէս, Պ. Նորայր Բիւզանդացւոյ գործն ամեն ուսումնասիրաց քաջալերութեան արժանի էր, և հեղինակն ալ անշուշտ այդ տասն և չորս տարիներն այս համոզմամբ անցուցած էր։ Ինք գովելի հաստատամտութեամբ իւր գործն ի գլուխ կը հանէ, և նոյնքան հաստատամտութեամբ կ'որոշէ ցվերջ յարատեւել, դէմ դնելով այն վերջին և ոչինչ նուազ մեծ դժուարութեան, որ ամեն Հայ հեղինակի առջեւ կ'ելնէ, այն է՝ տպագրութեան դժուարութիւնը։ Կ'որոշուի 2,250 օրինակ տպել, որ պակաս էր քան թէ աւելի՝ եթէ տպագրեալ գործին ընութիւնն ի նկատ առնուի. և ըստ որում հեղինակն այսպիսի մեծ գործի մը տպագրութեան համար պէտք եղած գրամագլուխն ինքնին չէր կրնար հայթայթել, բաժանորդագրութիւն կը բացուի, և միւս կողմէն կը ծանուցուի լրագրաց մէջ թէ, գիւրութիւն լինելու համար անոնց, որք չեն կրնար մի անգամ ընդ միշտ մէկ ու կէս ոսկի վճարել, Պ. Նորայրի Բառարանը թերթ առ թերթ ալ պիտի կարենայ գնուիլ՝ իւրաքանչիւր թերթը 60 փարա գնով։

Անոնց համար, այդ քով քանի մը դրուշ պատրաստ կրնայ դանելիլ միշտ, ինչպէս նաև աղքատ մեծատանց համար, որոց պարտքն է քաջալերել այսպիսի գործեր, մէկ ու կէս ոսկի վճարելով գտնէ մի օրինակի բաժանորդ գրուիլ, և անոնց համար ալ, որք չեն կրնար այդ դումարը մէկ անգամէն վճարել, իւրաքանչիւր թերթի բաժանորդ գրուիլ՝ ընաւ դժուար բաներ չեին, և նոքա որք այս երկու ձեւերէն մին ընտրելով Պ. Նորայրի գործին բաժանորդ գրուէին, անշուշտ Հայ գրագէտի մ'ողորմութիւն տալէ բոլորովին տարբեր բան մ'ըրած պիտի լինէին։

Դ'իմանամք սակայն, մեծ զարմանօք և մեծ տխրութեամբ, թէ (1) ինն ամսէ ի վեր (2) բաժանորդագրութիւն բացուած լինելով հանդերձ, և հակառակ այս ամենայն դիւրութեանց, միայն 80 բաժանորդ ստորագրուած է 100 օրինակի համար, և թերթի առ թերթի գնողներուն թիւն ալ 220 էն անդին չանցնիր։ Մեզ ըսուած տեղեկութեանց նայելով, տպագրութեան ծախքն (այսինքն, շարողէք, տպագրէք, թուղթ և կազմ) 1,000 Օսմ. լիրայի պիտի հասնի. իսկ բաժանորդագրութիւններէն 150 Օսմ. լիրա միայն հաւաքուած է, և ձեւքէ ծախուած թիւերէն ալ ամեն անդամ 330 դահեկան կը գոյանայ։ Ցիշեալ 150 Օսմ. ոսկին մնամեալքին սրշելու դանձապետներուն քով կը կենայ, և մինչև որ 200–230 բաժանորդք չգրուին, որոշուած է չգպչիլ այդ դումարին։

